



ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի: Կէս տարւանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Ե Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Տ է Լ Ե Փ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Հարուստ աղքատը. Հեռագիր. Չափազանցած
չեղորութիւն. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէջօր.
Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրու-
թեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Վերջին տեղեկութիւններ. Իշխան Բիւրակ և...
աւետարան. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւր-
քիայից. Նամակ Պարսկաստանից. Հնիւն-
ՆԵՐ. ԲՕՐՍԱ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Աշխարհիս բաները:

ՀԱՐՈՒՍՏ ԱՂԲԱՏԸ

Նորութիւն չէ հայոց Մայր աթոռի
աղքատութեան մասին խօսելը, բայց այն-
պիսի աղքատութիւն և սնանկութիւն, ո-
րին ենթարկված է նա այժմ, երբեք չէ
տեսնված, և այդ կողմից էջմիածնի այժ-
մեան վիճակը նոյն իսկ հայոց հասարա-
կութեան համար հանգէս է դալիս, իբրև
մի վերին աստիճանի անուր նորութիւն,
որի մասին արժէ մտածել, խորհել...

Հայոց լուսաւորչական եկեղեցու հոգևոր
կենտրոնը սնանկական և դրամական կող-
մից այնպիսի խեղճութեան է հասել, որ,
ինչպէս մեզ հաւատացնում են, չէ կարո-
ղանում միաբանութեան ուժովը տալ.
Դանձաբանում հազիւ մի քանի ռուբլի
ունի, և բացի դրանից ապագայ ծախսերի
համար էլ կանխաւոր մուտք չէ նախա-
տեսվում:

Բայց մի՞թէ յիշուի էջմիածինը ներ-
կայացնում է մի բոլորովին կղզիացած,
թեմերի հետ ոչինչ կապ չունեցող, եկեղե-
ցական հարուստ կալուածներէ, ահազին
գետններէ և անտառներէ չօգտվող
մի հիմնարկութիւն, որ հասել է այդ աս-
տիճան սնանկական խեղճութեան, դրամա-
կան սնանկութեան: Զարմանալի՜ չէ մի՞թէ,

որ եկեղեցական մի կենտրոնական մարմին,
որ թեմերի մէջ ունի հազարաւոր դեպի-
տին հողեր, թանգազին կալուածներ, որ
օգտվելով ժողովրդի բարեպաշտութիւնից,
տէր է հիւնաքի կալուածներէ, աների,
այգիներէ, կրպակներէ նոյն իսկ մեծ քա-
ղաքներում, այնքան արդիւնք չունի, որ
կարողանայ մի փոքր չէն պահել կենտրոնի
տաճարը, միաբանութեան բնակարանները,
որ կարողանայ կանխաւոր կերպով հոգա-
լի ծախսերը, և չը հասնի սնանկութեան
այն աստիճանին, որ հասկանալի է միայն
թիւրքաց պետութեան մէջ...

Կա տնտեսագիտական կատարեալ ան-
ընդունակութեան պերճախօս ապացոյց է,
երբ մի հիմնարկութիւն, տէր լինելով ա-
հազին հարստութեան, այնու ամենայնիւ
փող չունի, երբ մի կրօնական կենտրոն,
ահազին եկամուտներ կանխելով, այնու ամ-
ենայնիւ աղքատ է: Զմարիտ, մի հանե-
լով է դա, հարուստ, բայց մի և նոյն
ժամանակ աղքատ, կալուածատէր, բայց
մի և նոյն ժամանակ առանց արդիւնքի.
արդիւնքների բազմաթիւ աղբիւրներ, բայց
մի և նոյն ժամանակ միշտ դատարի դան-
ձաբան...

Գեորգ կաթողիկոսի և մանաւանդ Մա-
կարի կաթողիկոսութեան օրից մենք ան-
դադար սովորել ենք լսել, որ էջմիածինը
աղքատ է. փող, հարստութիւն չունի, և
մինչև այսօր այդ ձանձրալի դանձաբանը
տաճարապատկել են, թէև հարկւր և մի
երբորդ անգամ յիշեցրված է հայոց եկե-
ղեցու կենտրոնական միաբանութեան, որ
Մայր աթոռի դանձաբանը լի պահելու
համար հարկաւոր չէ ոչ ժողովրդին դի-
մել, և ոչ էլ անվերջ մուրացկանութիւն ա-
նել, այլ պէտք է մի փոքրիկ շնորհք, մի
թեմէ տնտեսագիտական ընդունակութիւն

ունենալ՝ շահագործելու այն ահազին
հարստութիւնները, որոնք թաղնված են
բազմաթիւ կալուածների մէջ, բայց որոնք
կուլ են գնում Աստուած միայն դիմէ թէ
ինչ մարդկանց որիորները:

Հարկաւոր էր ձեռնարան շինել—էջմիա-
ծինը դիմեց ժողովրդին. հարկաւոր եղաւ
մի քանի խուցեր կառուցանել, նորից դիմե-
ցին նոյն ժողովրդին. այժմ էլ, երբ ուզում են
կարկասել տաճարի մի մասը, կամ վերա-
նորոգել վեհարանի անշուք պատերը, կըր-
կին և կրկին դիմում են կամ ժողովրդը-
ղին, մոռանալով որ այդ տեսակ մու-
րացկանութեան և նոյն իսկ յաճախ
ստորութեան դիմելու կարիք չի լինի, եթէ
ինայն, տնտեսն, օրինաւոր կերպով կա-
ռավարեն այն ահազին կալուածները, և
բազմապատկեն եկամուտները, որոնք տըր-
փած են էջմիածնին, իբրև նուէր, և դար-
ձել են եկեղեցու սեպհականութիւն երկար
ժամանակներից ի վեր: Փոխանակ մու-
րացկանութիւն անելու, փոխանակ հանգիստ
գալու ժողովրդի առաջ իբրև սնանկ և
աղքատ, մի՞թէ աւելի պատուաբեր, աւելի
խելացի չէ՞ օգտվել այն բոլորից, որ եկե-
ղեցին ունի, փոխանակ այդ եկեղեցական
հարստութիւնները մասնաւոր մարդկանց
գրգռելու և օգտին ծառայեցնելու:

Ն Ե Ռ Ա Գ Ի Ր

(Ուստաց գործակալութեան)

Կ. Պօլիս, 10 օգոստոսի: Գեոպոլիսները
որոշեցին խորհուրդ տալ Բ. Գրան չաք-
տորէ հայոց պատրիարք Իզմիրեանին:
Գուրը յայտարարեց, որ նրա մտքով չէ
անցել պատրիարքին աքսորել, պատրիար-
քին թողաւորված է բնաւ իր համար

բնակութեան տեղ և նշանակված է թո-
շակ. պատրիարքը կարող է տեղափոխվել
մինչև անգամ Երուսաղէմ:

ՉԱՓԱՉԱՆՅՐԱՎ ՉԵՂՈՒԹԻՒՆ

(«Вѣстникъ Европы»)

Թիւրքաց քրիստոնեաների եւրոպական հը-
զօր պաշտպանների գրութիւնը բնաւորվում է
մի փոքր փաստով, որ հաղորդեց նորբա-
լտիստի «Times» լրագիրը: Անգլիական դա-
հաւոր նաւը նկատում է Կրիստէի ծովափնայ
բնակիչների մէջ մի աստիկ չարժու, նաւապետը
կարգադրում է մակոյիներ ինչպէս ծովը նաւա-
պետների հետ միասին և ամբ ուղարկել նը-
րանց՝ կոտորածից փախչողներին պատապարելու
համար, բայց յետոյ յետ է կանչում մակոյիներ-
ը, որովհետեւ միւս աղբիւրի նաւերը չեն հե-
տևում իր օրինակին, և նրա վարմունքը կարող
էր նկատվել իբրև չեղորութեան եղծում: Ու-
րեմն, բանից դուրս է դալիս, որ թիւրքերը կա-
րող են կատարել բնակիչներին եւրոպական նա-
ւատորմի աչքի առաջ, իսկ զինաւորված եւրո-
պացիները իրաւունք չունեն կանգնեցնել ա-
րիւնհեղութիւնը, ազատել փախչող հաղածվածնե-
րին, օգնութիւն և աջակցութիւն ցոյց տալ նը-
րանց, որովհետեւ ամեն մի ներգործական միջա-
մտութիւն կը համարվի թիւրքիայի իրաւունքնե-
րի եղծում: Առողջ դատողութեան համաձայն՝
ամենին գոյութիւն չունի մարդկանց կոտորե-
լու իրաւունքը և չէ էլ կարող գոյութիւն ունե-
նալ այդպիսի մի իրաւունք. ուրեմն, թիւրքիայի
ոչ մի իրաւունքը եղծված չէր լինի, եթէ եւրո-
պական նաւատորմների հրամանատարները ար-
գելէին բախտաւորներին յարձակվել ծովափ-
նայ անգլէն բնակիչների վրա: Չեղորու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ս Բ Ա Ն Ե Ր Ը

(Տառիս պատմականից)

III

Մի ճանապարհորդութիւն:

Մի հին ժամանակ մի հին աշխարհ շատ տանջ-
վեց: Հեռու էր նա, ոչ ոք չը տեսաւ թէ ինչ օ-
րեր անցան նրա գլխով: Մի ամիս էր թէ հինգ
տարի երկունքի այդ ժամանակը, յայտնի չէ: Ոչ
գիր կար այդ կողմերում, ոչ գրիչ: Ասում են մի-
այն որ հողը կտառեց էր, ծածկել էր իր բոլոր
ծակերը: Եւ ամեն տեղից հաւաքվեց կարմիր
հեղուկը, գետ դառաւ, ծածկվեց կարմիր փրփու-
րով: Երկնքի տակ միայն ջրերից է տուած վա-
զելու ճանապարհ: Բայց ջրերն երկնքի տակ կան
աղէտներ, որոնք չը տեսնված բաներ են ցոյց
տալիս և հէնց դրանով են զարդանք տարածում
մարդու. մանրի մէջ: Կարմիր հեղուկը չուզեց
կանգնած գետ մնալ, և մի հեռու ճանապարհի
պարտաւորութիւնները տեսաւ:

—Ուր, հարցնում էին լուս դաշտերը, հայրենի
աւրերը:

Եւ երբ լսեցին այդ հարցի պատասխանը, խղ-
ճահարկեցան:

—Սպասեցէք, ասացին նրանք կարմիր ալիւ-
ներին:—Երբ ժամանակ էլ տուէր մեզ, մենք ծա-
կեր կը մաքրեմք, ինչ արած, մեր վերջին ոյժերը
կը լարենք և մի կերպ կը ծծենք ձեզ, կը տե-
ղաւորենք մեր ծոցերում:

Բայց ալիւները հաւանութիւն չը տուեցին. իմա-
ցան նրանք որ այլ ևս հանգիստ ու կորած մնալ
անկարելի է: Իմացան և այն, որ լոյս աշխարհը
շատ մեծ է, շատ ընդարձակ: Զանապարհ կը լի-
նի և նրանց համար:

—Մենք խօսք ենք տալիս, մենք մեր վերջին
ոյժերը չենք խնայի ձեզ կուլ տալու, յախտեան
հանգստացնելու համար, —նորից և նորից հաւա-
տացրին դաշտերն ու լեռները:

Իսկ ալիւները բարձր ձայնով պատասխանեցին.
—Ձէ, փախչում ենք ձեզանից, ձեր ծակերից:
Բաւական է որքան ծծել էք մինչև այժմ: Հարց
ու փորձ է հարկաւոր... Զանապարհը մեզ պիտի
տանի դէպի հարց ու փորձ:

Աղողը գիշերը հովիտներում տարածված էին
կարմիր հեղուկի մրմունջները. հարց ու փորձ...

Պէտք է ասել, որ կարմիր հեղուկը այրող բան
է: Յայտնի չէ թէ ինչ արաւ նա այդ գիշեր, բայց
երբ արեգակը առաւօտեան դուրս բարձրացրեց
և բարակ ու մեղմ լոյս գցեց մերկ սարերի, ձի-
առ ծուռ գիւղերի, խաճճված գերանների ու
մոխրի դաշտերի վրա, սկսվեց դարմանալի բա-
նը: Գետը ալիւնովեց, ետաց ու առաջ գնաց:

Չորը հետևում էր ձորին, ճանապարհը չէր
ընդհատվում: Կարծես մի աներկոյթ առաջնորդ
կար, որ տանում էր և խնամքով տեղեր էր պատ-
րաստում առաջ գործելու համար:

Շատ լանցած, եկան չոր ու մեռած անապատ-
ներ: Չայն չէր լսվում, կենդանութեան նշան
չը կար. ամեն ինչ այրել, լափել էր կատաղի ա-
րեգակը: Նա հօ ճառագայթներ էր թափում, այլ
չիկացած երկաթից ցայտող կայծերի մի տարակա-
մի մի տեսակի գազաններ, արտաբերում շատ
նման բորենիներին, մնացել էին այդ թշուառ
երկրում: Ահազին խմբով նրանք վազվզում
էին մի կողմից միւս կողմ, մի պատառ ուտե-
լի, մի կաթիլ հեղուկ էին օրհնում: Բայց ի
զուր: Հողը դառել էր տաքացած կարծր աղիւս.
Ծծնաբերութիւնը լսված էր նրանից: Կատաղի
էին գազաններ, որովհետեւ կատաղի էր անա-
պատը: Նրանք դուրս էին թափում իրանց ամ-
բողջ անգլութիւնը, բոլոր ահուկի ջանքերը, բայց
նոյն կերպով և նոյն միջոցներով նրանց պատա-


խանում էր անապատը: Ոչինչ չէր տալիս նա,
իսկ անհամար խմբեր ինչպէս էին պահանջում.
ատամներով քանդում էին այրվող հողը, ախօսում
էին ահազին տարածութիւններ, խուզարկում էին
տաք փոշու ծաղերը և համատարած լուռութեան
մէջ սարսեցնող ձայներ էին բարձրացնում դէպի
չիկացած, անգութ երկնքը, իրանց անյատակ
փորերի գանգաւն էին տարածում: Սալայն ալ
ևս արձագանք չէին տալիս այդ աղաղակները.
չէր մնացել այլ ևս մի առաւելալ, որ հասկանա-
ր թէ ինչպէս են դրանք: Գազանը կատարեալ, ինը-
նագուլիս տէր էր դառել, ուստի դժբախտ հողը
այլ ևս ոչինչ չուներ, որ գոհացնէր նրան:

Աղբիւրի մի գոծուային օր էր, երբ վոնմա-
կների սարսափելի կերպով նրբացած լսելիքներին
հասաւ մի թեմէ ձայն: Այնտեղ, խորոված բը-
լոսների ետևում, մեռած ձորի մէջ, կարծես մի
ինչ որ բան չարժուում էր: Հազարաւոր ոտներ
դէպի այն կողմ վազեցին: Եւ ինչ են տեսնում...
Անցնում էր կարմիր գետը: Գազանային հրճուա-
նքը պարեւ սկսեց: Վերջապէս...

Գետը տեսաւ, ճանաչեց նրանց, բայց այս
անգամ արհամարհեց. իր յատակից մի կծու,
խեղդուկ մուկ հանեց, սաստկացրեց իր եռա-
ցումը և առաջ դնաց դուռ ու վտան: Որքան
և բուրբ ու անդալ դարձած լինէր գազանային
սիրտը, բայց նա էլ իսկոյն ճանաչեց, որ դա իր
հին պատիժն է: Տարիներ առաջ հէնց այդ կար-
միր հեղուկն էր, որ հեղեղեց այդ կողմերը, մի
ծողկած և օրհնած աշխարհ: Այդ ժամանակ
գազանային մեծ տօն էր, և կարմիր հեղուկը,
որ այդ տօնի շքեղ զարդարանքն էր, ստեղծել էր
յախտեանական տանջանքների այն լայնատարած
դաշտերը, ուր այն օրվանից իրանց սեփական
կատաղութեան մէջ տապալկվում են այդքան
գազաններ, նա էր, որ փոխանակ գազանային
ախորժակի համար յախտեանական յողթանակ
հաստատելու, այրեց, լափեց ամեն ինչ, որ ապ-

րում էր հողի երեսին: Կատաղի ատեղութեան
ստեղծել ոռնոց բարձրացաւ անապատների ստեղ-
ծող այդ գետի դէմ: Բայց գետը խուլ մնաց:
Նա այժմ թշուառ հեղուկ չէր, յախտեան գա-
զանային ձիւրաններին զոհված. այժմ նա ոյժ
էր, պատիժ էր: Վերացել էր նրա բնածին
վախկոտութիւնը. իր անհամար ցայտերը հաւաքել
էր, ամբարել մի տեղ և մղվում էր առաջ, անողբ
և անխորտակելի իբրև մի մուկգին տար: Եւ
ոչ իսկ գազանի թռեղերը կարող էին այժմ մի
վաղանցուկ զովութիւն զգալ այդ կատաղի չի-
թերից, ամեն ինչ կանաչ աղահոտութիւն էր
մի ուժով վերցնելու կարողութիւնն էր զգում
այժմ: Զանապարհներ իսկոյն որսվեցան. կար-
միր գետը դիմեց առաջ, իսկ հազարաւոր գա-
զանները նորից օրհասական տաքուպի մէջ
կոխկռտել սկսեցին անապատի մեռած կուրծքը:

Անցան այդ սարսափները. եկաւ մի սովորա-
կան աշխարհ: Մոռ ու խոտ երեսաց, թուշուր
ձայն էր հանում: Չորերը կանաչներով էին դար-
դարված, ծմակները մթնայնութիւն էին գետի ճա-
նապարհը: Տիրում էր խորին թմրութիւն, ամեն
ինչ ջարդուում էր բուն, խրատում էր մի կերպ
զուլիս պահել և գերեզմանին յանձնել: Նոր ե-
րկնքը, այդ տարօրինակ գետը, աւելի բարձ-
րացրեց այդ աշխարհի իմաստութիւնը: Քնի
երկիրը երես դարձրեց, սկսեց հաւատացնել, որ
ինքը անկարող է, խեղճ է: Մի կերպ օր մը թ-
նայեց, և ապրել թէկու՛ղ կիրաւ-պառաւ և ապա
հանգիստ գերեզմանի արժանանալ, ստանալ մի
փոքրիկ հողակոտ, որի տակ կարելի է պառկել
մինչև որ կը գայ Աստուծու ողորմութիւնը:—
անա թէ ինչ էր ուզում այդ աշխարհը. Գետը
նրան շատ չարչարեց, շատ տանջեց: Նրա ճա-
նապարհը շատ դժուար էր այդ լեռների մէջ.
արեւօք նա ինքն էր ուղում այդքան երկար
մնալ վախի և ընի հայրենիքում, թէ նրան պա-
հում էին պատճառներ, —յայտնի չէ: Գիտեն



Թիւն պահպանելու և չը միջամտելու կանոնները գործադրվում են միայն երկու դեպքում. առաջին՝ պաշտօնապէս կամ իրողապէս համահաւասար իրաւունքներ ունեցող զինուորական օժիւրի ընդհարման դէպքում. երկրորդ՝ կառավարութեան գործողութեան դէպքում պետական հողի սահմաններում կանգնելու, ինչպէս և առաջ Հայաստանում տեղի ունեցած շատ արիւնահեղ դէպքերը այդ տեսակներից չէին. նրանք միայն մասնատակաւ խառնիճաղանձ ամբողջ անգուստ կրքերի բորբոքումներն էին քրիստոնեայ աղգարանականութեան դէմ, բորբոքումներ, որ իշխանութիւնը իրաւունք ունէր իր ապականութեամբ, անգործութեամբ և երբեմն մինչև անգամ իր կատարեալ քաղաքականութեամբ: Այդպիսի դէպքերում խոսք անգամ չէ կարող լինել կրաւորական չէզոքութեան մասին նրանց համար, որոնք կարողութիւն ունեն փրկել կորչողներին և օգնել տառապեալներին: Հանրամարդկային պարտաւորութիւնը՝ օգնել մերձակորին՝ այդ դէպքում պահում է իր բոլոր իրաւունքները, մասնաւորապէս ստիպողական է դառնում եւրոպական կուլտուրական ազգերի ներկայացուցիչներին համար, երբ գործը վերաբերվում է այն հին սխալ քաղաքականութեան ակամայ զոհերին, որը պաշտպանում է Թուրքիային ի միտ նրա հայատակ աղգերի: Թուրքները աւելի կը զսպեն իրանց գաղաւթները, եթէ իմանային, որ մօտիկ կանգնած մեծ պետութիւնների նաւերը կը միջամտեն արեւմտեան ժամանակ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Ր Է 8 Օ Ր
XXXVII

Կ. Պոլսեցի «բարձրատիճան հոգեւորական» (Վշակ) № 90) երեք նպատակ ունի իր յօդուածի մէջ. նախ՝ ցոյց տալ, որ Սէֆէրեան արքեպիսկոպոսը մեծ հարստութիւն չէ թողել, երկրորդ՝ ապացուցանել, որ առհասարակ հայոց բարձրատիճան հոգեւորականները հարստութիւն չեն դիտում, ապա ուրեմն և իրանց մանկանից յետոյ մեծ դրամազուրկ չեն կարող թողնել: Երկրորդ՝ հաւատացնել հասարակութեանը, որ այս սողերի գործը նշանակալի է զրել «մարտնչել եկեղեցականութեան գոյութեան դէմ» և «կործանել ու բնաջնջել ընել Լէվ միաթիւնը և երուսաղէմը»:

միայն, որ անդգայ արարածներն անգամ փախան գետի ափերից: Օղերի թագաւորը, վեհափառ արքիւր, այլ ևս չէր իջնում ամպերի տակից և իր հսկայ թևերի տակ չէր առնում իշխանութիւնը ամբողջ ձորի վրա: Նապաստակն անգամ այլ ևս չէր թաղնվում թիփերի տակ, իսկ արտոյտները մեծ-մեծ խմբերով անցել էին սարի միւս կողմը և ծայրու չէին հանում: Միայն թիփաւետ սարերն ու բլուրները իրանց ոտներին մօտով ճանապարհ էին տալիս կարմիր հոսանքին: Եւ դրանցից մէկը, մի ամենի, ժայռոտ բարձրութիւն, տարիներ յետոյ, պատմել է այդ անցքը ընած երկրի բանաստեղծներից մէկին, և սա երգել է զարմանալի բաներ:

Երգածից մի քանի բան եմ յիշում: Քարերը, ասում էր բանաստեղծը, ձորերի յատակում թափված են և բուսած միայն վրերի համար: Միայն նրանց են սպասում, միայն նրանց են սիրում լեռի ապամասերի բեկորները. սիրում են դժուարացնել ճանապարհը, սիրում են սարքել անհամար ծոցեր, նեղ-նեղ անցքեր, դահաւիթման տեղեր. սիրում են պտոյտների խոռոչներ ոլորել հաղար անգամ, ծածուկ ու յայտնի թակարդներ դնել մի անուր չարախմբի համար: Եւ այդպէս նրանք ճանապարհ են տալիս ջրերին: Խրանք միշտ լուռ, միշտ անդգայ ու անշարժ, այդպէս են սիրում խաղեր անել ջրերի հետ: Զրբերը գալիս են, չարաճճիները... Աղմուկ ու աղաղակ, փրփուր, կատաղութիւն, հաւածանք ու արշաւանք են հանում իրանց չարադրոյնների դէմ: Եւ ոչ մի վայրկեան դադար չէ առնում յաւիտեանական իրարանցումը: Գրանից է ջրի ձորը այնքան զիւրկական: Այնտեղ հով է, այնտեղ քաղցր է. սրտերը այնտեղ են գնում: Այնտեղ կարելի է տեսնել երջանկութիւնը. դա ջրային փոշու այն տարափն է, որ սրտկամ է ջրերի ափերում տեղաւորված փղերի աշխարհը:

Բայց այդպէս չէր կարմիր հոսանքը: Նա եկաւ, և զաղարեց ձայն ու ծայրու ձորերի ամ-

շատ ցաւում ենք, որ բարձրատիճան հոգեւորականը, պաշտպան հանդիսանալով Սէֆէրեանին, չէ կարողանում մազի չափ անգամ հերքել փաստը: Բացի «Մշակի» Կ. Պոլսի թղթականից, «Արեւել» լրագիրը, և նրանից յետոյ «Հանգէս Ամսօրեայ» ամսագիրը հաղորդեցին, որ, յիշատի, Կ. Պոլսի հասարակութեան մէջ այն կարծիքն է տիրում, որ Սէֆէրեան, մեռնելով, թողել է ոչ թէ 200 հազար, ինչպէս հաղորդված էր «Մշակի» մէջ, այլ 300 հազար բուրլի փող. սակայն, «Արեւել» անգամ, չը նայած իր հասկանալի ցանկութեան, չը կարողացաւ ցոյց տալ, որ այդ կարծիքը անհիմն է: Միակ հիմնարկութիւնը, որին հայ հասարակութիւնը կը հաւատար, դա հայոց պատրիարքարանն էր (ի հարկէ, ոչ թէ Բարթողիմէոսի պղծած պատրիարքարանը). որը կարող էր հեղինակաւոր խօսքով վերցնել Սէֆէրեանի յիշատակից այդ անպատաւներ կասկածը. — բայց այդպիսի մի բայլ հայոց պատրիարքարանը չարաւ, և այդպիսով, հասարակութեան մէջ տարածված լուրը 200 հազար ր. հարստութեան մասին մինչև այսօր էլ մնում է իր ամբողջ գոյութեան մէջ, որ և է վտանգի տղերից չը հերքված...

Եւ քանի որ չէ հերքված, թէ մենք և թէ ամբողջ հասարակութիւնը իրաւունք ունենք համոզված լինելու, որ, յիշատի, աղքատ, սղարքերի տակ թաղված երուսաղէմի վանքի պատրիարքական փոխարքիպոսը զիջել է անագին հարստութիւն, մասնաւորապէս որ Սէֆէրեան մի անգամն է հայոց այն բարձր հոգեւորականութեան, որի սէրը զէտի ոսկին և ոսկու դեղը՝ պատմական ակնյայտի հայարտութիւնն է:

Չը հերքելով առաջին փաստը, մեր հակառակորդ բարձրատիճան հոգեւորականը՝ իրան թող է տալիս, արտասուք թափելով, բացակասելով. — որտեղից կարող են մեր եպիսկոպոսները հարստութիւն դիզել, քանի որ նրանք էլ հաւածվում են իրանց ժողովրդի հետ միասին, ապրում են աղքատ վանքերում, «խճալի նկուղներին մէջ, թանապուրով և չորաբեկ հացով...»: Ո՛հ, որքան սրտայոյլ է այդ պատկերը. «խճալի նկուղների մէջ» նստեցնել հայոց եպիսկոպոսներին, և առաջն էլ զենել լեռնապուր և չորաբեկ հաց մը, այն միջոցին, երբ այդ բոլոր բարձրատիճան եպիսկոպոսները և արքեպիսկոպոսները, կիտված գեղեցիկ Բօֆօրի ափերում, պարախոսներով իրանց մարմինը և գրպանը,

բողջ երկարութեան վրա. ամեն ինչ ձուլվեց, մեռաւ և ստացաւ մի հաւաքական, ընդհանուր անուն — անշարժութիւն: Չայն չէր հանում և հոսանքը. նա դանդաղկոտ էր, առաջ էր գնում անյողողով, ինչպէս մահ, խորհրդաւոր, ինչպէս գերեզման: Հոսած, նեխված, — նա ամբողջապէս սաւ-սաւ շեղուէր էր. կարմիր ու սև ծաղերը, թանձր, միապաղաղ, կալով էին, ծանր էին: Հոսանքը հանդարտ, շատ հանդարտ էր, բայց աննկատ խոշոր էր, և միայն մօտիկ ափերն էին լսում այդ բանը. դա նրա կրակն էր, որ եռում էր: Սև ու սպիտակ քարերի մօտ, հսկայական թակարդների առաջ, ջրերը կատաղի կը լրակ են. ուզում են ուտել, ունչացնել արգելքները, բայց զուր յուզմունքից սարերի գլուխն են հանում իրանց ձայները: Իսկ կարմիր հեղուկը յուսաւանցեցող դանդաղկոտութեանը կանգ էր առնում արգելքների մօտ, ծանր կեղծով լճանում էր. ետեղից գլորվող սաւերը առջևից գնացողների մէջն էին բարձրանում, կուտվում էին և ապա կարմիր, լարծնու ճանապարհների գծերով, զլորվում էին քարերի գլխից, հանելով խուռ ու խեղդված, ընդհատվող թնդիւններ:

Այսպէս երգել է ընած երկրի բանաստեղծը. նա դեռ շատ բաներ է տեսել, հոտած գետի վրա շատ զովաւանքներ է հիւսել, լաց է եղել, իր սիրտը պատուել է: Բայց զրանք մտաւրվել են: Մեր աշխարհը մոռանում է շատ արտասուքներ, շատ պատուված սրտեր: Յիշվում է միայն այն, որ կարմիր գետը, չը նայած որ այդքան դանդաղաչարժ էր, այդքան լուռ, բայց ամենակարող բան էր: Լեռները գալին նրա դէմ, նա չէր կանգնի. օրեր, շաբաթներ եթէ քիչ լինէին, նա ամիսներ, տարիներ կաշկարած էր դանդաղ կերպով և կանցնէր — Սակայն տեսել թէ երբեմն ինչ մեծ կարծիք ունեն իրանց մասին խեղճ-խեղճ առարկաները:

Երբ դեռն անցաւ սովորական աշխարհից, ուր

դաւաճանելով այն բոլորին, որ սուրբ է և վեհ, տապալելով այնպիսի մարդուն, ինչպիսին է իդմիլեան և գահ բարձրացնելով Բարթողիմէոսի նման անարժան մարդուն, մի և նոյն ժամանակ շարունակում են հարստահարել այն եկեղեցին, որի սպասարը պիտի լինեն, և այն ժողովուրդը, որին իբրեւ թէ հովելու են կոչված, և այդ բոլորը յօգուտ իրանց մեծ գրողանքին: Թող մեր հակառակորդը մասնակի վրա թիւ իրան ծանօթ եպիսկոպոսներին և արքեպիսկոպոսներին, և կը համոզվի իր սրտի խորքերում, որ մեր ասածը տարրական ճշմարտութիւն է: Եթէ կամենում էր, մենք կը թւենք: Ասեցէք, խնդրում ենք, փոքր հարստութիւն ունի պարսկերի տակ թաղված երուսաղէմի այժմեան պատրիարք Զարութիւնը՝ Վեհապետան: Մթթէ չը զիտէր, որ մեծարանակ ոսկիների տէր է այժմեան ինքնակոչ եղեղապաճ Բարթողիմէոսը: Կամ ձեզ յայտնի չէ այն հարստութիւնը, որ տարաւ իր հետ Վահրամ եպիսկոպոս Մանկունին կամ այն ոսկիները, որ զիջել են Գիմաքեան, Ալեքեան եպիսկոպոսները: Մոռացա՞ք միթէ, որ նոյն իսկ Սրուանձտեանի նման «համեստ» եկեղեցականը մեռնելով թողեց մօտ 30 հազար բուրլի կամ չը զիտէր, որ Թուրքիի նախկին առաջնորդ հանգուցեալ Մխիթարեան եպիսկոպոսն ունէր մօտ 100 հազար, որը նրա մահից յետոյ եկեղեցու ձեռքն էլ չանցաւ: Մենք և մեղ հետ ամբողջ հայ հասարակութիւնը դիտել մի ուրիշ հայ արքեպիսկոպոս, որ ունի աւելիք մօտ 100 հազար ր. հարստութիւն. մի այլ եպիսկոպոս, որի կարողութիւնը վաղուց անցել է 50 հազարը: Գիտե՞ք և մի ուրիշ բարձրատիճան հոգեւորական, որի ահագին հարստութիւնը չանցելով մի մի աղգականների միջոցով: Եւ ինչու միայն եպիսկոպոսներ. մինչև իսկ մի հասարակ, ողորմելի վարդապետ այս րօպէիս տէր է 40 հազար ր. հարստութեան: Չը լսեցիք միթէ, որ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանի մուշակից, երբ նա մեռաւ Զուլայի մէջ, Ավստանի վարդապետը հանեց 40 հազար բուրլի փող, որը մի անագին հաց եղաւ Սինօղի մէջ: Վերջապէս որ մէկը թւենք...

Եւ, տարաբաղդաբար, այդ բոլոր հարստութիւնները, նրանց տէրերի (?) մահվանից յետոյ, չեն անցնում եկեղեցուն, ինչպէս հաւատացնում է մեր հակառակորդը, այլ նրանց աղգականներին, եղբայրներին և «որդեղբայրներին», ինչպէս մի կերպ ասելին են պաշտում, ճանապարհը չուռ եկաւ դէպի մի նեղ, բայց հրաշալի ձոր: Այդտեղ թագաւորում էր հրաշքը. միայն այն տեսքը, որ ունէր ձորը, միայն այն տեղը, ուր գտնվում էր նա, քանիք քանիք երկիրներով, քանիք մեծ աշխարհների խելքն էր թաղեց, նրանց քաղցր քունը կտրել, նրանց անորթակը գրգռել, Միանգամայն անվիճելի էր որ այդտեղ է ամբողջ աշխարհի աչքը: Բայց կախարդված էր այդ աչքը, ոչ ոք չէր կարողանում նրան մօտենալ, որովհետեւ ամենքն էին ուզում մօտենալ: Այդ պատճառով էր որ ձորը ամպի էր մնացել և միայն մի նիւար ծառ կանգնել էր ժայռի վրա: Նրա արմատները սողում էին կարծր քարերի կրծքին և ոչ մի հիւթ չէին գտնում. արեւ արում էր նրանց, տօթը չորացնում: Առանց արմատի ծառ չի ապրի. ուստի նրան խոճացել էին, և արմատի մի հատ թեւը ժայռերի միջով մտել էր հողի մէջ և այնտեղից հիւթ էր քաշում մի խեղճ ապրուստի համար: Ծառը մոռացված չէր. նրան զրել էին այնտեղ և տուել էին հոգմացոյցի պաշտօն:

Կարմիր հեղուկը թափվեց այդ հրաշալի ձորի խոռոչները: Ուղիղ ճանապարհ չը կար նրա համար. սկսեց էր հարիւրաւոր ոլորում, մոլով ու նեղիլի անցքերի միջով հոսանք տանել, և քիչ էր մնում որ գետը այդտեղ կորցնի իր մեծ մասը: Ծակ ու ծակերից դուրս թափվեցան սև սև ուրուականներ, որոնք դէս ու դէն վաղեցին, աղաղակ բարձրացրին: Ուզում էին վաղեցնել, յետ դարձնել հոսանքը. բայց չուտով տեսան որ գետի համար այլ ևս չը կայ վախի զգացմունք, ուստի քաղցր խօսքի օգնութեան դիմեցին: Աղաւանները ուրուականների կերպարանք էին ընդունել, բայց չէին կարողացել ծածկել իրանց կեղտոտ, աղան կտուցները: Կարմիր ալիքները շատ լաւ էին ճանաչում դրանց. աշխարհի սկզբից դեռ ոչ մի ագաւ կարմիր հեղուկի համար մի բարի կոնչոց չէր հանած իր ներսից, ուր

այդ գիտենք հարիւրաւոր փաստերից: Հերքել, ուրանալ, չը տեսնել այդ բոլորը, կարող է միայն այն մարդը, որը, կուրացած իր դասակարգի աններելի պակասութիւնները ծածկելու տենչով, աշխատում է օպիտակ գոյներով նկարագրել այն, ինչ որ անպայման սև է, ոչ միայն արտաքուստ, այլ մինչև ոսկորի ծուծը:

Ահա դա է մեր համոզմունքը բարձր հոգեւորականների մասին: Ինչ վերաբերվում է Կ. Պոլսի ափերից որոտացող բարձրատիճան հոգեւորականին այն խօսքերին, թէ մենք մեզ նպատակ ենք դրել «կործանել և բնաջնջել ընել Լէվ միաթիւնը, երուսաղէմը և եկեղեցականութիւնը», — կարող ենք միամտացնել նորին սրբազնութեան, որ մենք այդ բանը երբէք չենք անի, որովհետեւ այդպիսի հակապակաս ոյժ չենք ունեցել և չուենք: Դրա հետ միասին պարտք ենք համարում վերադարձնել նորին բարձր սրբազնութեան, բարձրատիճան հոգեւորականի գրչին և բերանին անվայել այն հայտնաբերքը, որոնցով նա համեմել է իր անհամ յօդուածը:

Խ. Մալումեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 10-ին

Որովհետեւ, թիմիս Տէր Առաջնորդի միջնորդութեան համեմատ, Վեհափառ Կաթողիկոսի սրբաւորաւ կոնդակով, ի 6 յուլիսի № 959, դուրոցների փակվելու պատճառով, առաջիկայ սեպտեմբերից այլ ևս կարիք չէ համարվում թեմական տեսչի, ուրեմն բարձրագույն և տեսչական պաշտօնը, ուստի խոնարհաբար խնդրում եմ չնորոշ անել՝ թույլ տալու «Մշակ»-ի միջոցով ծանուցանել այդ մասին յարգելի ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որ այսուհետեւ նեղութիւն չը քաշեն ինձ դիմել թէ տեղեր ստանալու և թէ այլ հարցերի համար:

Մեքայո ջաւ. Մեղեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, օգոստոսի 5-ին

Այս օրերս խմբագրութիւնը կը տանապ գաւառ-Փաթիպայի «Բանաստեղծութիւններ» և բոլոր տղաքրութիւնը: Ինչպէս կը տեսնեք ձեզ ուղարկված օրինակից, զիբը տպված է Պետերբուրգում, մօտ 3000 օրինակ: Թէև այդ զիբը միշտ նստած է լինեց արիւնի ծարաւը: Բայց այժմ ինչ զարմանալի բան: Խօսում են սև աղաւաններ և նրանց քաղցր խօսքերի երկուսից մէկը «եղբայր» բան: Եւ ինչպե՞ս... Երբ է տեսնված այդպիսի բան: Կարմիր գետը ցնցվեց, թուլացաւ. նա սկսում էր հաւատար: Իսկ ուրուական աղաւանները հասկացան թէ որտեղ է գաղտնիքը, և սկսեցին լաց լինել, իրանց կուրծքը ծծել: Եւ լացի ու ողբի մէջ ինչքան լաւ էր հնչում այդ բառը՝ «եղբայր»...

Բոլորովին յուզվեց կարմիր գետը, կակղեց, և, իսկոյն բաց անելով իր սիրտը, պարզապէս յայտնեց որ ինքը գնում է հարց ու փորձ որոնելու:

Աւելի ևս ստատկացաւ աղաւանների իրարանցումը: Նրանք վաղեցին, մտան մի ինչ որ խոր ու մոլի խոռոչ, բայց իսկոյն էլ վերադարձան, նրանց հետ գալիս էր մի խոշոր ու ծեր աղաւաւ: Հրէշաւոր էր նրա տեսքը. նա բաց ու խուլ էր անում իր անգլին, անյատակ ընդանր, ագահ լեզուն հանում էր և աղան աչքերով ցոյց էր տալիս, որ նա կարող է մի կաթիլ ջրի նման կուլ տալ այս ամբողջ գետը, մի լաւ «ուխիս» կանչել ու կանգնել, սև ձուկաւոր շոյիլ և ապա հաստատ ու դուրսի ձայնով ասել որ օհինչ չէ եղել և չը կայ: Մամապատ, խոնաւ կամարների տակ նա ծայրագոյն ինքնաբաւականութեամբ կուչաց, և ցոյց տուեց իրան չըջապատող աղաւաններին:

— Սրանք իմ որդիներն են, ասաց աղաւախ լեզուն. — իմ որդիները ձեր եղբայրներն են, ուրեմն դուք էլ իմ որդիներն էք:

Եւ յանկարծ, աղաւախ սիրտը փղձկաց. կոնչոցը սուր և սարքած ցաւակցական էր:

— Որդիներս, հոգիս դուրս դա՛ ձեզ համար... Բարեբաւ, սարեւոր էք ընկիւ...

(Կը շարունակվի)

Ռաֆայէլ Պատկանեանի «Երկնատորի» հետ միա-
ժամանակ է լոյս տեսել, բայց վաճառքի չէր
հանված, որպէս զի չը խանգարի «Երկնատորի»
տարածվելուն: «Երկնատորի» պահանջը համա-
րեալ բոլորովին դադարեց, այնպէս որ «Բանաս-
տեղծութիւններ» վաճառ չը հանելը արդէն
միտք էլ չունին: Վերջինս իր մատչելի գնի
(50 կոպ.) պատճառով կարող է հեշտ և արագ
տարածվել: Գիրքը տրված է հեղինակի ընտա-
նիքի հաշուով և հասել է մօտ 500 բուրլի: Յան-
կայի է, որ ամբողջ 3000 օրինակը միանգամից
առնվել, սեփականատէրերը պատրաստ են անել
հարկաւոր դիմումը: Եթէ այդ չափով, այն ժա-
մանակ կարելի է առ մաս-մաս, միայն խո-
շոր գումարներով, որովհետեւ մի մի ծախելը և
սեփականատէրերին անյարմար է, և գնողին
ճանապարհածախսի պատճառով գիրքը թանգ
կը հասնի:

«Երկնատորի» մնացել է անվաճառ մօտ
հազար օրինակ:

Յովհան. Պատկանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր թղթակիցը Կ. Պօլսից մեզ հաղորդում է,
որ թիւրքաց մեծ վիզիրը անուղղակի կերպով
յայտնել է իշխմանը, որ չտալով հետանայ
Կ. Պօլսից և գնաց Երուսաղէմ: Ինչպէս երևում
է, թիւրքաց կառավարութիւնը մտադիր է եղել
անարգար կերպով վերաբերվել իշխմանին և
աքսորել նրան Տրիպոլի, սակայն դեսպաննե-
րի միջամտութիւնը ստիպել է Բ. Դուան ակա-
մայ փոխել իր այդ համարձակ մտադրութիւնը:

Առաջիկայ 1897 թ.ի յունվար ամսի վերջին
Կիւիվ քաղաքում պէտք է բացվի գիշարտեսա-
կան և արդիւնաբերական ցուցահանդէս, որին
կարող են մասնակցել Ռուսաստանի դանազան
մասերից: Հասցէն՝ Кіевъ, КОМИТЕТЪ ВЫСТАВКИ.

Բիշաբի հնագիտական ժողովին առաջարկու-
թիւն է արված յաջորդ միջազգային հնագիտա-
կան ժողովը գումարել Թուրքեստանի Սամար-
կանդ քաղաքում: Ռուսաց ձեռքին՝ Սամարկանդ
քաղաքը այս 28 տարվայ ընթացքում շատ յայտնի
է դարձել օտարազգի հնագէտներին, որոնք այ-
ցելում են նրան ամեն տարի: Հնագիտական փո-
ղովը գեղեցիկ առիթ կը լինէր մասնագէտներին
մի տեղ հաւաքել և Թիւրքեստանի հնագիտու-
թեան ուսումնասիրութեան զգալի դարկ տալ:

Արտաքին գործերի մինիստր իշխան Լ. օբա-
ն օ վ օ ս օ վ օ կ ի, մայրաքաղաքների լրագիր-
ների ասելով, այսօր, օգոստոսի 13-ին, ճանա-
պարհ է ընկնում արտասահման:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում են. «Մեր քաղա-
քը բացի մի երկու աղբիւրներից ուրիշ աղբիւր-
ներ չունին, այն ինչ օրանից երկու տարի առաջ
հասարակութիւնից ահագին փող է հաւաքված
աղբիւրներ անցկացնելու քաղաքի դանազան մա-
սերում: Մինչև հիմայ այդ չէ իրագործված: Ի՞նչ
է եղել փողը՝ յայտնի չէ»:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Նորերս քաղա-
քային այգում ժողովրդական դրօսանք կար,
հրավառութեամբ, պարբերով և մանկական խա-
ղերով: Վերջում լատերա-այլէզրի ևս տեղի
ունեցաւ: Արդիւնք ստացվեց մօտ 200 բուրլի»:

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Ամառվայ սե-
զօնը այս տարի տխուր է անցնում: Ամառնայց
եկողները զօճ չեն, ինչպէս ուրիշ տարիները:
Բօսօնդան, որ անցեալ տարիներում ամեն երե-
կով թնդում էր գինւորական երաժշտութեան
ձայնից, այժմ զուրկ է այդ գումարածութիւնից:
Արտահանման դժուրանգը դժբանդէսի գնա-
լով Ջալալօղլի կողմերը, իր հետ է տարել նաև
գինւորական երաժշտութիւնը: Ինտելիգենտ դա-
սակարգը համարեա ոչինչ չէ չինում, մի քանի
երիտասարդներ, ինչպէս լուս է նքը, մտադիր են
մի ներկայացում տալ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսումնասիրի զուրքը, ստանալով Կ. Պօլսից

հեռագրական մի խնդիրը՝ ուղարկելու 2000
ֆունտ ստերլինգ Մալաթիայի կարօտեալ հայե-
րի համար, բացի այն 4000 ֆունտ ստերլինգից,
որ պահանջվում է վանի համար, ուղարկեց
նպաստող ֆօնդի գումարներից 3000 ֆունտ
ստերլինգ Կ. Պօլսի անգլիական ներկայացուց-
չին: Դրա հետ միասին գիւմում է հասարակու-
թեան, հրախրելով աջակցել ֆօնդի քրիստո-
նէական գործունէութեան:

Լօրդ Սօլսբրի, Թ. Սանդերսօնի միջոցով, ուղ-
ղել է հայկական նպաստող ֆօնդի գանձապա-
հին հետեւեալ նամակը.

«Պարօն, մարկիզ Սօլսբրի յանձնել է ինձ
յայտնել ձեզ, որ ստանալով ձեր նամակը, նա
հեռագրեց Կ. Պօլսի մեր ներկայացուցչին և
հարցրեց Մալաթիայի կարօտեալ հայերի համար
պահանջվող 2000 ֆունտ ստերլինգ նպաստի
մասին: Այժմ ստացվել է Հերբերտից մի հեռա-
գիր, որից երևում է, որ Մալաթիայի համար
վերցված է յատուկ պահեստադրամից 600 ֆունտ
ստերլինգ, իսկ մնացած 1400 ֆունտ ստերլինգը
պէտք է հօգուցվի նպաստող ֆօնդից: Սա-
ն ի թ ո յ ո յ »:

«Daily News» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը
հեռագրում է օգոստոսի 8-ից հետեւեալը. «Պատ-
րիարք իշխմանի հրաժարականը մեծ յուզ-
մունք է պատճառել հայերին: Բ. Դուան նախ
պաշտօնապէս յայտարարեց, թէ խառն ժողովը
պէտք է ընտրի մի տեղապահ, բայց տեղեկնա-
լով, որ հաւանական ընտրելին կարող է լինել
իշխմանի կողմնակից եպիսկոպոս Յովհաննի-
սեան, հրաժարակցի մի իրաքէ, որով նշանակեց
նոր խառն ժողով քաղաքացի ու ձեռնարկան-
ներից և ութ աշխարհականներից, որոնց մեծ
մասը կառավարութեան կողմնակիցներ են:
Դրանց պատուիրեցին նոյն օրը (հինգշաբթի)
ժողով անել: Զիվեր փաշան, կայսերական իրա-
դէն կարգաւոր յետոյ, թողեց որ ժողովը դադա-
րի ընտրութեան գործով: Այդ վարմունքով
մեծ հարուած արվեց հայաց սահմանադրութեան:
Խառն ժողովի՝ անդամները ընտրվում են, սահ-
մանադրութեան հիման վրա, Ազգային ժողովից:
Ոչ մի առիթ չը կար լուծելու եղած խառն ժո-
ղովը: Բացի դրանից, պատրիարքները երբէք չեն
ընտրվել նշանակված ժողովների կողմից: Այդ
հանգամանքը կարող է ծանր թիւրքամայրութիւն-
ների առիթ դառնալ»:

Բէյաբի գործակալութիւնը հաղորդում է Կ.
Պօլսից, որ այնտեղ կառնաւորված է Մեսրոպ
անուանով մի բանախոյ, որի մասին կասկածում
են, թէ պապականում է յեղափոխական կօմի-
տեան:

Կ. Պօլսից հեռագրում են «Times» լրագրին
յուլիսի 31-ից. «Բ. Դուան, որ առաջ հերքում
էր ամենախնդրական կերպով Նիքարաուա տեղի
ունեցած նոր անկախութեան մասին բոլոր
լուրերը, այժմ, բրիտանական դեսպանատան
յայտարարութեան առիթով գրած իր պատաս-
խանի մէջ խոստովանում է, որ, արդարեւ, ան-
կախութիւններ եղել են, բայց այդ բանի մէջ
մեղադրում է հայերին: Բ. Դուան ասելով, ան-
կախութիւնների հեղինակները արդէն կալանա-
ւորված են և կը պատվեն օրէնքով: Սակայն
բրիտանական դեսպանատանը յայտնեց, որ Բ.
Դուան այդ տեսակ պատասխանը գտնում է ոչ
բոլորովին գոհացուցիչ»:

Մօզովից հաղորդում են, որ 2000 հայ վանի
կողմերից փախել թաքնվել են սարերում, քաղա-
քի չըջակայքում: Հաւանօրէն, նրանք փախչում
են քրդական յարձակումներից: Տեղական իշխա-
նութիւնը զօրք է ուղարկել հայերին ստիպելու
իրանց անելը վերադառնալ:

Պարիզի «Autorité» լրագրի մէջ Պօլ-դը-Կասան-
եակ մի համակրական յօդուած է նուիրել
Թիւրքիայի քրիստոնէականների ընդհանրապէս, և
հայերի թշուառ վիճակին մասնաւորապէս:

«Новости» լրագիրը իր մի առաջնորդող յօ-
դուածում հետեւեալ նկատողութիւններն է ա-
նում. «Եթե պետութիւնների անգործունէութիւ-
նը խրախուսէր ապստամբութիւն է գործում ֆա-
նատիկոս մահմետականների վրա: Նրանք տես-
նում են, որ մեծ պետութիւնների մէջ հա-

մաճայութիւն չը կայ, որ նրանց միջամտու-
թիւնը արտադրարկում է միայն դիպլոմատիա-
կան ծանուցադրերի ձեւով, և այդ պատճառով
թուլ են տալիս իրանց՝ ամեն տեսակ զաղանու-
թիւնների ենթարկել քրիստոնէականներին: Թիւր-
քերը միայն ֆիզիքական ոյժն են հասկանում.
դիպլոմատիական յորդոցները նրանց վրա չառ
քիչ են ազդում: Յիշենք հայկական խառնակու-
թիւնները. Բ. Դուան մի և նոյն կողմից ևս խա-
ղաց, ինչ որ այժմ խաղում է կրեաական հար-
ցի վերաբերմամբ: Նա նոյնպէս զանազան խոս-
տովներ տուեց, բայց երբէք չը մտածեց այդ
խոստովները կատարելու մասին»:

Վանից մեզ գրում են, որ վերջին անկար-
գութիւնների ժամանակ պարսից հիւպատոսը
մեծ պաշտպանութիւն ցուց տուեց հայերին,
ապաստան տալով նրանց հիւպատոսարանի մէջ:
Երբ վանի պահանջեց հիւպատոսից իրան յան-
նել հայերին, հիւպատոսը պատասխանեց. «Եթէ
ուզում էք, կարող էք ուժալուծել հիւպատոսա-
րանը, բայց ես հայերին ձեռ չեմ յանձնի»:

Անգլիական պարլամենտի փակման ժամանակ
արտասանված զանազան ճառի մէջ հետեւեալն է
ասված թիւրքաց գործերի մասին. «Թիւրքաց
կայսրութեան մի քանի մասերի վիճակը շարու-
նակում է սատիկ անհանգստութիւն պատճա-
ռել: Ներկայումս, անկարգութիւնների զլխաւոր
կենտրոն հանդիսանում է Կրեաէ կղզին: Ես պահ-
պանեցի խիստ չէզոքութիւն թիւրքաց կառավա-
րութեան և ապստամբվածների վերաբերմամբ,
բայց եւրոպական միւս պետութիւնների հետ հա-
մաձայնութեամբ, ես աշխատեցի հաշտութիւն կա-
յացնել, առաջարկելով հաստատել արդար կա-
ռավարութեան այնպիսի սիստէմ, որը միա-
կերպ գործադրելի լինէր կղզու թէ քրիստոնէայ
և թէ մահմետական ընտելիների համար»:

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿ ԵՒ... ԱԻԵՏԱՐԱՆ

Մենք արդէն հաղորդեցինք, որ իշխան Բիս-
մարկ ասել է. «Կրեաական հարցը ինձ հետա-
քրքրում է աւելի քիչ, քան մի բուռն հող իմ
այգու մէջ»: Շատերին անհաւատալի կը թւար,
թէ նոյն իսկ երկաթի կանցլէրը կարող կը լինի
այդպիսի մի անհօգի նախադասութիւն արտա-
սանել այն ժամանակ, երբ ամբողջ կղզին արիւ-
նով է ողողված: Բայց ահա ինչ է գրում Բիս-
մարկ Զօն-Օփիլդային, որ հրատարակել էր XIX
դարին պատիւ բերող այդ նախադասութիւնը.
«Շնորհակալ եմ, որ դուք իմ մասին լաւ կար-
ծիք ունեք: Բայց նոյնպիսի կարծիք կրեաացիներ
ի մասին, ինչպէս իմն է, յայտնել է ս. Պօղոս
առաքեալը Տիտոսին գրած իր թղթի մէջ, գը-
լուի Ա. 12—13. «Կրեաացիները միշտ ստա-
խօսներ են, չար դադաններ, ծուլ մարմիններ:
Այս վկայութիւնը ճշմարիտ է: Այս պատճառով
յանդիմանիք նրանց խառնութեամբ, որպէս զի
նրանք առողջ միան հաւատի մէջ»:

Այս նամակը եթէ ունի մի հետաքրքրութիւն,
այն է, որ Բիսմարկ կարգում է աւետարանը:
Հետաքրքրական է իմանալ թէ աւետարանի որ
տեղից է վերցրել Բիսմարկ երկաթի և արիւնի
այն քաղաքականութիւնը, որ ամբողջ Եւրոպայի
թշուառութեան պատճառ դարձաւ: Զը կայ աւե-
րի զգուշի օրբապղծութիւն, քան այն, երբ հա-
մաշխարհային չարագործները խօսում են աւե-
տարանի և առհասարակ մարդկային սուրբ զգա-
մունքների անուանից: Մանաւանդ չը կայ աւե-
րի զգուշի քան քան այն, երբ աշխարհի համար
հանձար, մեծութիւն է դառնում մի այնպիսի
մարդ, որի միակ ծառայութիւնն է եղել փառա-
բանել արիւնհոգութեան, մարդասպանութեան
արհեստը: XIX դարը հէց նրանով է ողորմելի,
որ հակադաս արձաններ է կանգնեցնում Բիս-
մարկին: Բայց այդ արձանները ապագային
հարկաւոր կը լինեն լոկ զգուշների զգացմունք
պահպանելու համար:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պօլսի, օգոստոսի 3-ին

Պօլսի թուրք թերթերէն կը քաղւմ հետեւեալ
լուրերը, ձեզի կը թողում ըմբռնել մի քանիսի
ներքին միտքը:

«Անաստուրի նահանգներուն ընդհանուր քննիչ

Շաբիր փաշա, որ հարկ եղած քննութիւնները
կատարելէն ետքը Մալաթիայէն ճամբայ ելած էր,
չորեքշաբթի օր (յուլիս 31-ին) խորհրդ հասեր է:
«Համախիչ հեծելազորանքին մէջ մասը, որ Միւ-
լի աշիրէթին պէտք խորհրդ փաշայի հրամանա-
տարութեան ներքե կը գտնուի, Պօլսի բերելու հա-
մար Տրապիզոն գրկուեցաւ չրջուն մարտանաւ մը
և երկու չոզնուս»:

«Զէյթունի նոր դալմաթալ Կուվանարի էֆէնդի
ճաղօրբու և իր օգնականը հինգշաբթի (օգոստոս
1) մեկնեցան Պօլսէն խօշնակունքն երթալու հա-
մար, ուսկից իրենց պաշտօնատեղին պիտի ու-
ղեւորին»:

«Պօլսոյ վճարելի ատենան (cour de cassation)
պատժական ճիւղին առժամանակեայ նախագահ
նշանակուեցաւ Ալի Շահպար էֆէնդի (նախկին
կարապետ Շահպարեան), բուն նախագահը, Գա-
մախու և փոխանորդ իրեանք էֆէնդի տը
կրեաէ գրկուած բլլալուն համար»:

«Նետտրական-տարիներու պէտ Մար-Շիմուն
էֆէնդիին տրուեցաւ երկրորդ կարգի Օսմա-
նիյէ պատուանշան»:

«Ֆրանսական դեսպան պ. Բանպոն յուլիս 30-ին
մեկնեցաւ Պօլսէն Ֆրանսա երթալու համար: Ար-
ձակուրդը պիտի տնէ երկու ամիս: Գեսպանին
բացակայութեան ատեն, գործերը պիտի վարէ
դեսպանատան խորհրդական դը լա Պօլիէրէ»:

«Երեւոյական նախարարը խիստ հրամաններ
գրկեց թուր կուսակալներուն որ ամէն կերպով
աշխատեն գտնաւ յետեւեալ տուրքերը (պա-
ղճէ)»:

«Շէֆազաթ պատուանշանին երկրորդ կար-
գը արուեցաւ ամերիկացի Միս Բլարա Պար-
թլուն»:

«Վառնայի մէջ սկսեր է հրատարակուիլ
«Ալթունճա» ամսու թերթ մը, որ կը քաջալիք
ալպանիացիներուն ապստամբութիւնը: Թուրք
թերթերը կը հարուածեն այդ թերթին «խուժա-
րական հրատարակութիւնները»:

Պ—ի

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Վան, յուլիսի 31-ին

Այստեղ, ըստ երեւոյթին, խաղաղութիւն վերա-
հաստատուած է: Վաղը հայոց մի զոյրոց պիտի
բացվի. բողոքականներ արդէն բացեր են թա-
ղական դպրոցներ չը կան առ այժմ: Երկուսն ալ
սկսեր է վերաբացուիլ:

Բոլոր կենդանի մնացած զիւղացիներ իրենց
տեղեր յիշուած են: Այս տարուայ հունձըը
չատ յաջող է: Յօրենի չափը 35 դրուէ կը ծախ-
վի այժմ:

Մինչև 10—15 օր տեղս պիտի հասնի Շէբիր
փաշան. անգլիական կօնսուլը հրամանատարեց է
անոր գիմաւորելու:

Արդէն յայտնի դարձած Մատեղդին փաշան
(կայսերական բարձրագոյն քննիչ) անցեալ չաք-
թու ականակուա Օսմանիէ առաջին կարգի
պատուանշան ստացաւ, 500 ոսկով կայսերական
նուէրով հանդերձ:

Նոր ընտրի կուսակալ Շէմսէֆին ոյլի վրա
մեծ յոյսեր կան դրուած, եթէ միայ և չարու-
նակէ իր պաշտօն:

Մ—դ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, յուլիսի 31-ին

Հախառակ ամառային տօթին, Թէհրանի փո-
ղոցներում մի անսովոր երթևեկութիւն է տի-
րում այսօր: Կարծես մայրաքաղաքի «Մարջ-Մէյ-
դանը» մի մեծ օտոնախմբութիւն կայ: Մարդ-
կանց, կանանց և երեխաներու մի անվերջ քաղ-
մութիւն, մինչև իսկ չըջակալ գիւղերէն գալով,
աճապարում է այս կողմ և այն կողմ ամենքն
ալ ունենալով նոյն նպատակն և նոյն խօսակ-
ցութեան նիւթն:

Այս առաւօտ, արեւածագին, Միլղա-Վիգա Բեր-
մանի, զէճի (մարտիրոս) Նասր-է-զ-զին Շահի
սպանդոն, տուճից իր վատ ոճիրն, ընդունելով
կախազանցի իւր մահուան պատիժն:

Կանխաւ տեղեկութիւն առած լինելով, առա-
ւօտեան ժամը 4-ին, գնացի «Մարջ-Մէյդան»
կառնած զինուորական մարդանքի ընդարձակ
դաշտ, որը մէջտեղն արդէն գիշերանց հա-
տատուած էր կախազան: Զինուորներու և
պաշտօնականներու մի ստուար քաղաքական անդ

խոսեալ, սպասում էին իրանց «սերտ» հրա-
մանատարին: Երբ նա եկաւ իւր զինուորական-
ներու հետ, նուազածուններն զարկին պարսկա-
կան ազգային եղանակն և զինուորներն կախա-
ղանի շուրջն կազմեցին մի ընդարձակ քառան-
կին, որոյ ներքի կողմն կային միայն պաշտո-
նակալներն և լուսանկարչութեան զործիւր ունե-
ցողներն:

Արեւ նոր ծագում էր, երբ մի խուլ թմրկա-
հարութիւն ծանոց մահապարտի դայն: Նա մո-
տենում էր յամբարայն, չբնապատեալ իւր զի-
նեալ պահապաններով: Նա չզիջեալեալ էր և
հազած ունէր միայն մի անդրադարձիւր: Երբ
կարողանի տակն հասաւ, կանգնեցաւ և սահա-
պաններն իւր շրջաններն հանելով՝ վզին փաթա-
կեցին մի պարան, զոր կապեցին կախաղանի
հաստ թովին: Այս գործողութեանց ատեն նա
չառ չարաբարում էր, սակայն ոչինչ չստաւ և ոչ
ալ մի զոգոհութիւն ցոյց տուաւ: Հանդարտու-
թեամբ բոլորեցին էր նայում, և իւր նայուածքն
ոչ վախկոտ էր և ոչ ալ զոռոգ: Մի անգամ,
երբ ձեռքերը ետին կապում էին, նոր աչքերն
արտասուքով լեցուեցան և, վերջապէս, երբ
ոտքերն գետնէն բարձրացան, իւր նիւթը մար-
մինն ստատիկ կերպով ցնցուեցաւ: Սակայն նա
չուտ զգայալեղիկ եղաւ, թէ և նշանակութեան չա-
րունակեց մի տաք վայրկեան: Եւ երբ նուազա-
ծուններն նորէն հնչեցնում էին ազգային եղա-
նակն, զինուորներու ետեւ խոնեալ ահապին
բազմութիւնն հայտնելով անիծում էր կախեալ
արքայապանին: Այսպէս լուծուեցաւ Շահի ըս-
տանման վրէժը, սակայն երբէք չեմ փափաքիւր
այդպիսի տեսարանի մը նորէն ականատես լի-
նել:

Մարմինն երեք օր կախուած պիտի մնայ և
առաւօտն մինչ երեկոյ կախաղանն չբնապա-
տուած է մի ստուար երկսեռ խառնիխառն
բազմութեամբ:

Բազմաթիւ

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՐԻՍՏԻԱՆԻՒՄ, 9 օգոստոսի: «Ֆրամ» չորեքու-
թի նաւապետ Սիւրբուրաք հեռագրում է, որ նա
հասել է 850,59-ի, Ֆրանց-Յովսէփ երկրից դէպի
հիւսիս լճով ամենամեծ խորութիւնը եղել է
4,000 մետր, իսկ ամենացած բարեխառնու-
թիւնը—520:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 օգոստոսի: Ոսկէ դրամի կուր-
սը 1897 թ.ին որոշելու մասին կայացած բարձ-
րագոյն հրամանը կատարելու նպատակով, ֆի-
նանսների մինիստրը զեկուցել է կառավարիչ
սենատին հրատարակութեան համար հետեւեալը.
1) մինչև 1897 թ. դեկտեմբերի 31-ը, բոլոր կա-
ռավարական հաստատութիւնների և մասնաւոր
ընկերութիւնների, երկաթուղիների դրամարկնե-
րը պէտք է ընդունեն, իսկ պետական բանկի բո-
ւր հաստատութիւնները պէտք է գնեն և ծա-
խեն ոսկէ դրամը եղած գներով, այն է 7 ր. 50
կ. պորտուգալեանը և 15 ր. իմպերիալը. 2)
1897 թ.ից յետոյ ոսկէ դրամի յիշեալ գինը կը
մնայ անփոփոխ, մինչև որ նոր կարգադրութիւն
կը լինի:

ՆԻՃՆԻՆՆՈՎ ԳՈՐԾԻ, 10 օգոստոսի: Առեւտրա-
կան-արդիւնաբերական ժողովի սեկցիան որոշեց,
միջնորդել թող տալ պայմանագրեր կնքել մէտ-
րիկական սիստեմով, ինչպէս որ մէտրիկական
սիստեմը ընդունվի դատարանի կողմից պայմա-
նագրերի մէջ: Տէլեգրաֆային կրթութեան սեկ-
ցիան որոշել է միջնորդել որ բարձր դպրոցնե-
րը աւելի շատ մատչելի լինեն և թողարտվի
կողմնակի մարդկանց դաստիարակութիւնը լսել:

Կ. ՊՈԼԻՍ, 10 օգոստոսի: Երբային ամառը
նախկին աշխատակից, նաւային սպայ Ռիզա, որ
փախել էր Եգիպտոս և յետոյ կալանաւորվել
դատաւարական է մահվան պատժի զինուորական-
ծովային դատարանի վճռով՝ երիտասարդ թիւր-
քիայ կուսակցութեան դատաւարութիւնների մէջ
մասնակցած լինելուն և ծովային մինիստրի զէմ
արած սպանութեան փորձի համար:

ԼՕՆԳՈՆ, 10 օգոստոսի: «Times»-ին հաղոր-
դում են Ալեքսանդրիայից, որ մինիստրների
խորհուրդը որոշել է զարգացնել կահիրէի եր-
կու լրագրի հրատարակութիւնը, վիկտորիա թա-
գունու զէմ արած յարձակումների համար:

Կանից հաղորդում են նախ լրագրին, որ եւ-
րոպական հիւպատոսները զիմել են կրեալի
քրիստոնեաներին յայտարարութեամբ, որով հրա-
ւիրում են նրանց յետ կանգնել թշնամական
զործողութիւններից: Հիւպատոսների ջանքերը
ուղղված են կրեալացիների չահերը պաշտպանե-
լուն: Կրեալի քրիստոնեայ պատգամաւորների
կարծիքը այն է, որ թիւրքական միսիան ու-
ղարկված է բանակցութիւնները ձգձգելու նը-

պատակով: Ապստամբութիւնները ցանկանում են,
որ եկող կիրակի յայտարարվի կղզու միութիւնը
Յունաստանի հետ, եթէ մինչև այդ ժամանակ
Բ. Գուսը չընդունի քրիստոնեաների պահանջ-
ները:

ՀՈՒՄ, 10 օգոստոսի: Կառավարութիւնը հա-
տատեց դեռ մարտ ամսին, գնեցեալ Բալդինգի
առաջարկութեան հիման վրա, գնեցեալ վալլէ-
սին տուած լիազօրութիւնը՝ բանակցութիւններ
անելու Մէնէլիքի հետ՝ զինուորական գերիւնե-
րին յանձնելու և խաղաղութիւն կնքելու մա-
սին:

Կ. ՊՈԼԻՍ, 10 օգոստոսի: Կրեալական ազգա-
յին ժողովի նիստը երկարաձգված է էլի 2 շաբա-
թով: Կեալականների խորհրդակցութիւնից յետոյ,
Կրեալի հիւպատոսներին հրաման է ուղարկված
գործել այնպէս, որ երկպառակութիւն չը ծագի
Յիւնի փաշայի և պատգամաւորների մէջ:

ԲԻԳՍ, 11 օգոստոսի: Օգոստոսի 10-ին պրո-
ֆէսոր Վիրթով կարգաց մի զեկուցում հիւսի-
սային Եւրոպայի, մասնաւոր լիֆլանդիայի ա-
մենահին ազգաբնակչութեան մասին:

ՊԱՐԻՅ, 11 օգոստոսի: Մեծ պետութիւնները,
կատարեալ համաձայնութեան զգալով կրեալի
վերաբերմամբ, չուտով կը ներկայացնեն սուլ-
թանին այն զիջումների ցուցակը, որոնց իրանք
անհրաժեշտ են համարել:

Կ. ՊՈԼԻՍ, 11 օգոստոսի: Այստեղի դիպլոմա-
տիկան չբնապատեալ գտնում են, որ կրեալական
զործերի մէջ հիւպատոսների միջամտութեան
ազգացողութիւնը սպառնում է: Կուսը, ըստ երե-
ւոյթի, նայալէս համոզվել է, որ առանց մեծ
պետութիւնների հեղինակութեան նա չէ կարող
զգալել կրեալացիներին և ընդհանուր ապստամ-
բութեան երկիւղ կայ: Նա ցանկանում է, որ
մեծ պետութիւնները ուղղակի միջնորդ հանդի-
սանան իր և կրեալացիների մէջ: Վերջիններս
էլ խնդրում են միջնորդութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 9-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	94 ր. 10 կ.
Բեռլինի վրա 100 մարկ	45 > 95 >
Պարիզի վրա 100 ֆրանկ	37 > 325/8 >
Ոսկի	արծէ. . . 7 > 50 >
Մաքսային կուպոններ	149 > — >
Բորսային դիվիդենդ	5 1/4 > 70/0 >
40/0 պետական բնաւ.	993/8 > — >
Ներքին 50/0 անուրի փոխառութ.	286 1/2 > — >
— արտաւ.	253 > — >
50/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի 210	— > — >
50/0 պետական երկաթուղ. բնաւ.	105 > — >
40/0 ներքին փոխառութեան	99 > — >
4 1/2 0/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի 1003/8 >	— > — >
Աղն. կալ. Պետ. բանկի խաղաղութ.	— > — >
4 1/2 0/0 վկայալ. գիւղ. հող. բանկի 1005/8 >	— > — >
Փոխ. կրեալ. ընկեր. մուս.	— > — >
Պետերբուրգի քաղաքային կրեալ.	101 3/4 > — >
ընկերութեան օրիգինալներ.	101 > — >
Մոսկովայի քաղաք. օրիգինալներ.	101 > — >
Օրիգինալ	99 > — >
Թիֆլիսի կալ. բանկի 60/0	102 1/2 > — >
50/0	99 1/2 > — >
Քուսկային	60/0 > — >
50/0	102 1/2 > — >
—	99 1/2 > — >

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵՅՍ ՍՄՐՈՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ

որ աւարտել է Գեորգեան ձեմարանի վեցե-
րորդ դասարանը, մասնաւոր դասեր է փնտռում
զանազան քաղաքներում: Համաձայն է երգել և
եկեղեցիներում, նաև պատրաստել երգեցիկ
խումբ: Գիմել՝ БАНУ, контора «Русского об-
щества», Միհրան Տէր-Գրիգորեանցի:
(№ 93) 1—6

ԿԱՐՍԻ ՀԱՅ-ԿԱՐՏՈՒԿԱՅ ԺԻՆԿԱՆ

Միադատեան երկխոսոց ուսումնարանի համար
հարկաւոր է մի ուսուցիչ, օրինաց XI հատ. 1365
յօդ. համաձայն, տարեկան երեք հարիւր յիսուն
լուրի ռոնիով: Ցանկացողները թող բարեհա-
ձեն զիմել մինչև օգոստոսի վերջը. КАРСЬ,
настоятелю армяно-католической церкви, архи-
мандриту отцу Петросу Бердякяну.
(№ 93) 1—3

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ԲԵՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ
Ընդունում է ԱՇԱԿԵՏՆԵՐ՝ զինեթիւ կիսա-
զինեթիւ և երկեթիւներ:
(№ 92) 2—3

ՍԵՒ ԵՒ ՍՊԻՏԱԿ ՊԼՊԵՂ

աղած, մաղող խուփ ունեցող թիթեղեայ տուփերում, նոյնպէս և թրաշ սրտաներում սեղա-
նի համար, 1/32-ից մինչև 1 ֆունտ:

Բ. ԿԵՕԼԵՐ ԵՒ ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Ընկերութեան գործարանի աղուցքը ծախվում է ամեն տեղ, բոլոր նշանաւոր առեւտրական-
ների մօտ:

Աղած պղպեղին խառնուրդ անելը այնպիսի սովորական երևոյթ է և այնքան չափից
անց են կացրել, որ պատրաստ աղած պղպեղ յաճախ աւելի է ծախվում, քան ոչ ա-
ղած, ամբողջ պղպեղը: Իսկ Բ. ԿԵՕԼԵՐ և ԸՆԿ. Ընկերութեան նշանը, ինչպէս բոլորին յայտնի
է, ամենաճիշդ գրաւականն է ապրանքի լուս յատկութեան համար:
(5) 2—3

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Չեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահ և ան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, ե-
րաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՐՈՒՆԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԵՆ

Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ձեւերի, հան-
դերձ նստիկային արդիւնաբերական և կերտինի գործարանական հաշուառեւտրական:
Բ) Առեւտրական թուարանութիւն.
Գ) Առեւտրական նամակագրութիւն.
Դ) Գեղադրութիւն և ամենալատ ձեւերի ուղղութիւն:
Պարապրոնները սկսվելու են սեպտեմբերի 10-ից ձախից յետոյ և պարբերաբար շա-
բաթանկելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առան-
ձին գործնական պարապրոնները:
Ցանկացողները թող զիմել գրաւը կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան,
ՍՕԼՈԼԱԿ Ֆրէլիհեան փողոց, տուն Սոլիստովի, № 13:
Վերջինեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խեղդէկէի գրա-
վաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրախառնանոցներում:
ԳԻՆԵՆ Է 3 ր. 50 կոպէկ:
Օտարաբարաբայիները զիբը գնելու համար կարող են զիմել հեղինակին, առանց
պատասխան ծախ վճարելու:
(Ե. հ.) (№ 74) 8—15

ՁԵԹԵՒՓՈԾԻ

ՊԼՂԶԷ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՄԱՐԲԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բ. ԿԵՕԼԵՐ ԵՒ ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԵՒ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ:
Այդ գործարանի ձեթով և փոշով մաքրված պղնձ առարկաները այնպիսի ողոր-
կում և փայլ են ստանում, որ չեն ունեցել մինչև անգամ նոր եղած ժամանակ: Սակայն ցնե-
լու ժամանակ հարկաւոր է պրոպանալ ուղի, ծագում ունեցող պղպեղի արդիւններից, որով-
հետեւ վառ յատկութեան ձեթի գործածելը, կամ, որ զլխաւորն է, խոնաւ օդի մէջ ինքն իրան
լուծվող վիճակի կիրը (այսինքն քիմիոյի չը դարձած) շատ հրապուրիչ է իւր շահաւէտութեամբ
և շատ յաճախ գործ է ածվում, այն ինչ յայտնի է, որ այդ կերպ փոխված կիրը բոլորովին
կորցրել է իւր ոյրը:
(6) (№ 78) 2—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Զ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍԵՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Առարկաները ստանում են առաւելագոյն եր.
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տեսեսութիւն, 2) Առեւտ-
րական Թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուարանութիւն համարչի վրա, 5) Առեւտրական Թղթացութիւն, 6)
Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղադրութիւն, վատ ձեռքի
ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 16-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի
2-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև
8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլովիւում, Ալեքսանդր ֆրիդմանովի
տանը, № 9, Սերգիեւսկայա և Նազորայա փողոցների անկիւնում: Ծրարիցը և
կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովանովների բանկային
գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբարաբայիք զիմում
են՝ Тифлис, С. П. Мануэльянцу.
(Ե. շ.) № 73 11—25

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐԵՒԸՆԿ

Հնարոններ

ԾԱՂԿԵԱՅ ՕՊԵԸԿՈԼՈՆԻ

Ձանազան զայնի
Նորութիւն տուալեալի ջուր
«ՕՊԸ ԲՐՕԿԱՐ»
ՁԳՈՅՇ ՊԵՏԵՐ Է ԼԻՆԵԼ ԿԵՂՎՈՒՄՆԵՐԻՑ
(ամ. 10, 25) № 80 3—9